ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

05.06.2020թ. *Քաղաքացիական գործ*
ք. Երևան *թիվ ԵԿԴ/2653/02/15*

ՈՐՈՇՈՒՄ
Թիվ ԵԿԴ/2653/02/15 քաղաքացիական գործի ենթակայությունը որոշելու մասին

1. Գործի դատավարական նախապատմությունը և ենթակայության հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

Քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

13.03.2012թ. Վահան Ութունջյանը Սուսաննա Մազմանյանից որպես փոխառություն ստացել է 23.000 ԱՄՆ դոլար գումար և պարտավորվել է վերադարձնել 13.03.2012թ.:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԿԴ/2144/02/13 քաղաքացիական գործով 23.07.2014թ. կայացված վճռով Սուսաննա Մազմանյանի հայցն ընդդեմ Վահան Ութունջյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին բավարարվել է. որոշվել է Վահան Ութունջյանից հօգուտ Սուսաննա Մազմանյանի բռնագանձել 23.000 ԱՄՆ դոլարին համարժեք 9.416.430 ՀՀ դրամ՝ որպես պարտավորության գումար:

Վահան Ութունջյանի /Ցեդենտ/ և Արամ Ութունջյանի /Ցեսիոներ/ միջև 12.07.2013թ. կնքված շահառուի գույքային իրավունքների զիջման մասին պայմանագրի համաձայն՝ Ցեդենտն անհատույց զիջել, իսկ Ցեսիոները ձեռք է բերել ք.Երևան, Արամի փողոց, 74 շենք, բնակարան 5 հասցեում գտնվող բնակարանի հանդեպ տարածքի ձեռքբերման պահանջի իր իրավունքը:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից 01.08.2013 թվականին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01082013-01-0017 վկայականի համաձայն՝ «(...) ք. Երևան, Արամի փողոց, 74 շենք, բնակարան 5 հասցեի անշարժ գույքն առուվաճառքի և հիպոթեքի 29.07.2013թ. թիվ 3807 պայմանագրի հիման վրա 01.08.2013թ.-ին սեփականության իրավունքով գրանցվել է Արամ Վահանի Ութունջյանի անվամբ»:

Արամ Ութունջյանի և Ռոման Մուրադյանի միջև 14.05.2014 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի թիվ 2430 պայմանագրի համաձայն՝ վաճառողը գնորդի սեփականությանն է հանձնել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված 01.08.2013 թվականի N 01082013-01-0017 սեփականության իրավունքի գրանցման վկայականում նշված անշարժ գույքը՝ ք. Երևան, Արամի փողոց, 74 շենք, 5 բնակարանը:

Կոմիտեի կողմից 19.05.2014 թվականին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19052014-01-0032 վկայականի համաձայն՝ «(…) ք. Երևան, Արամի փողոց, 74 շենք, բնակարան 5 հասցեի անշարժ գույքն առուվաճառքի 14.05.2014թ. թիվ 2430 պայմանագրի հիման վրա 19.05.2014թ.-ին սեփականության իրավունքով գրանցվել է Ռոման Գագիկի Մուրադյանի անվամբ»:

Սուսաննա Մազմանյանի ներկայացուցիչ Մարիամ Ղուլյանը 11.06.2015 թվականին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Դատարան) ընդդեմ Վահան Ութունջյանի և Արամ Ութունջյանի՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին:

Դատարանի (դատավոր՝ Ռ. Ներսիսյան) 15.06.2015 թվականի որոշմամբ հայցադիմումը ընդունվել է վարույթ:

Հետագայում գործով պատասխանողներ են ներգրավվել Ռոման Մուրադյանը, «Դեկադո» ՍՊԸ-ն, «Դի ընդ Էյջ գրուպ» ՍՊԸ-ն, «Յունիբանկ» ԲԲԸ-ն, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ն: Գործով երրորդ անձ է ներգրավվել Վահան Ութունջյանի սնանկության գործով կառավարիչ Ռուբեն Խալաթյանը:

09.09.2015 թվականին Սուսաննա Մազմանյանի կողմից կատարվել է հայցի լրացում, իսկ 10.11.2015 թվականին Դատարան է ներկայացվել դիմում՝ հայցի առարկան փոխելու մասին: Արդյունքում հայցապահանջ է ներկայացվել ընդդեմ Վահան Ութունջյանի, Արամ Ութունջյանի, Ռոման Մուրադյանի, «Դեկադո» ՍՊԸ-ի, «Դի ընդ Էյջ գրուպ» ՍՊԸ-ի, «Յունիբանկ» ԲԲԸ-ի, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ի, երրորդ անձ Վահան Ութունջյանի սնանկության գործով կառավարիչ Ռուբեն Խալաթյանի՝ առոչինչ (շինծու) գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու, պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին:

Թիվ ԵԿԴ/0346/04/15 սնանկության գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 08.12.2015 թվականին կայացված վճռով Վահան Ութունջյանը ճանաչվել է սնանկ:

Վահան Ութունջյանի սնանկության գործով կառավարիչ Ռուբեն Խալաթյանը 17.06.2016 թվականին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Արամ Ութունջյանի, Ռոման Մուրադյանի, «Դի ընդ Էյջ գրուպ» ՍՊԸ-ի, «Յունիբանկ» ԲԲԸ-ի, «Դեկադո» ՍՊԸ-ի, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ի, երրորդ անձ Սուսաննա Մազմանյանի՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի ճանաչման և որպես հետևանք անշարժ գույքի

առուվաճառքի պայմանագրերի և ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ում կատարված պետական գրանցումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Դատարանի **(դատավոր՝ Հ. Զարգարյան)** 20.06.2016 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանի **(դատավոր՝ Ռ. Ներսիսյան)** 02.05.2017թ. որոշմամբ թիվ ԵԿԴ/2653/02/15 քաղաքացիական գործն ըստ հայցի Սուսաննա Մազմանյանի ընդդեմ Վահան Ութունջյանի, Արամ Ութունջյանի, Ռոման Մուրադյանի, «Դեկադո» ՍՊԸ-ի, «Դի ընդ Էյջ գրուպ» ՍՊԸ-ի, «Յունիբանկ» ԲԲԸ-ի, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ի՝ առոչինչ /շինծու/ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու, պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին (նախագահող դատավոր Ռ.Ներսիսյան), և թիվ ԵԿԴ/2480/02/16 քաղաքացիական գործն ըստ հայցի Վահան Ութունջյանի սնանկության գործով կառավարիչ Ռուբեն Խալաթյանի ընդդեմ Արամ Ութունջյանի, Ռոման Մուրադյանի, «Դի ընդ Էյջ գրուպ» ՍՊԸ-ի, «Յունիբանկ» ԲԲԸ-ի, «Դեկադո» ՍՊԸ-ի ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ի, երրորդ անձ Սուսաննա Մազմանյանի՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի ճանաչման և որպես հետևանք անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրերի և ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ում կատարված պետական գրանցումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին **(դատավոր՝ Հ. Զարգարյան)** միացվել է մեկ վարույթում և գործին շնորհվել է ***թիվ ԵԿԴ/2653/02/15 համարը:***

11.07.2017 թվականին Վահան Ութունջյանի սնանկության գործով կառավարիչ Ռուբեն Խալաթյանի կողմից կատարվել է հայցադիմումի լրացում:

Դատարանի 05.02.2018 թվականի վճռով Սուսաննա Մազմանյանի և Վահան Ութունջյանի սնանկության գործով կառավարիչ Ռուբեն Խալաթյանի հայցերը մերժվել են:

Նշված վճռի դեմ Վահան Ութունջյանի սնանկության գործով կառավարիչ Ռուբեն Խալաթյանի և Սուսաննա Սուրենի Մազմանյանի կողմից ներկայացվել են վերաքննիչ բողոքներ:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.07.2018թ. որոշմամբ ներկայացված վերաքննիչ բողոքները բավարարվել են մասնակի: Դատարանի կողմից 05.02.2018 թվականի թիվ ԵԿԴ/2653/02/15 քաղաքացիական գործով կայացված վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Դատարանի (դատավոր՝ Ա. Կուբանյան) 29.08.2018 թվականի որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ, և դատական նիստի օր է նշանակվել 2019թ. հունվարի 23-ին:

ՀՀ Նախագահի հրամանագրով դատավոր Ա. Կուբանյանի լիազորությունները դադարեցվել է և վերջինս նշանակվել է Սնանկության դատարանի դատավոր:

Թիվ ԵԿԴ/2653/02/15 քաղաքացիական գործը 10.01.2019թ. հանձնվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Հովսեփյանին և Դատարանի 14.01.2019թ. որոշմամբ այն ընդունվել է վարույթ:

31.05.2019թ. Սուսաննա Մազմանյանի ներկայացուցիչը, հիմք ընդունելով «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի կարգավորումները, միջնորդություն է

ներկայացրել Դատարան՝ նշված քաղաքացիական գործն այլ դատարան ուղարկելու վերաբերյալ:

Դատարանի 19.12.2019 թվականի որոշմամբ Սուսաննա Մազմանյանի ներկայացուցչի միջնորդությունը մերժվել է:

14.05.2020 թվականի որոշմամբ Դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասը, «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված (ուժի մեջ է մտել 15.04.2020թ.) թիվ ՀՕ-294-Ն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասը, նույն օրենքի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» սահմանող 72-րդ հոդվածի 1-ին և 10-րդ մասերը, քաղաքացիական գործը հանձնել է Սնանկության դատարանի քննությանը:

19.05.2020 թվականին թիվ ԵԿԴ/2653/02/15 քաղաքացիական գործը մակագրվել է Սնանկության դատարանի դատավոր Բ. Մկրտչյանին:

25.05.2020 թվականի որոշմամբ Սնանկության դատարանը, հիմք ընդունելով «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասը, 26-րդ հոդվածը, թիվ ԵԿԴ/2653/02/15 քաղաքացիական գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ հետևյալ հիմնավորմամբ.

«Թիվ ԵԿԴ/0346/04/15 սնանկության գործն ըստ Սուսաննա Սուրենի Մազմանյանի դիմումի՝ Վահան Գրիգորի Ութունջյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին գտնվում է ՀՀ սնանկության դատարանի դատավոր Բ.Մկրտչյանիս վարույթում: Այդ գործով պարտապան Վահան Գրիգորի Ութունջյանը ճանաչվել է սնանկ:

Նշված նորմերի բովանդակային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առանձնացրել է երեք խումբ վեճերով ծագած քաղաքացիական գործեր, որոնք պետք է քննվեն սնանկ ճանաչված պարտապանի սնանկության գործը վարող դատավորի կողմից: Դրանք են՝ 1. Սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների վերաբերյալ ծագած վեճերով քաղաքացիական գործերը, 2. երրորդ անձանց պատկանող ապահովված իրավունքի առարկայի վերաբերյալ ծագած վեճերով քաղաքացիական գործերը, 3. պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած վեճերով քաղաքացիական գործերը:

Ընդ որում օրենսդիրը սահմանել է նաև երկու առանձին պայման, որոնց առկայության կամ բացակայության դեպքում միայն կարող են այդ վեճերով քաղաքացիական գործերը քննվել պարտապանի սնանկության գործը վարող դատավորի կողմից, դրանք են՝ 1. բոլոր այդ երեք խումբ քաղաքացիական գործերով ծագած վեճերը պետք է ազդեն պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա,

2. այդ քաղաքացիական գործերով հայցերը չպետք է ներկայացված լինեն կառավարչի կողմից:

Ըստ գործի նյութերի՝ սույն վեճը վերաբերվում է ՀՀ, ք.Երևան, Արամի փողոց, 74 շենք, թիվ 5 հասցեի անշարժ գույքին, որը թիվ ԵԿԴ/0346/04/15 սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված չէ:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ հայցերից որևէ մեկի, մասնավորապես՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի ճանաչման պահանջի, բավարարման դեպքում այդ գույքը կարող է ընդգրկվել սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում, ապա սույն դեպքում դատարանի փաստում է, որ հայցը ներկայացվել է սնանկության գործով կառավարչի կողմից, ուստի «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն այդ հիմքով ևս գործը ՀՀ սնանկության դատարանի քննությանը ենթակա չէ:

Տվյալ դեպքում, դատարանը նկատի ունենալով թիվ ԵԿԴ/2653/02/15 քաղաքացիական գործը ՀՀ սնանկության դատարանի քննությանը ենթակա լինելու վերաբերյալ անհամաձայնության հանգամանքը, գտնում է, որ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն պետք է ուղարկել ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին»:

Թիվ ԵԿԴ/2653/02/15 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 27.05.2020թ.:

2. Կիրառելի իրավական նորմերը, պատճառաբանությունները և եզրահանգումը.

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 18-րդ հոդվածը սահմանում է քաղաքացիական գործերի ենթակայությունը, որի 1-ին մասի համաձայն՝ «քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի»:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «սնանկության դատարանին են ենթակա սնանկության հարաբերությունները կարգավորող օրենքով նախատեսված բոլոր գործերը»:

15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

«Սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի

առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր):

Առանձին քաղաքացիական գործերը հարուցվում, քննվում և լուծվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով»:

Մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում»:

Օրենսգրքի 439-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

«Սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգիրքը:

Մինչև սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելը ներկայացված հայցադիմումների, դիմումների և բողոքների վարույթ ընդունելու հարցը լուծելիս կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի նորմերը:

Սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առաջին ատյանի դատարանի վարույթում գտնվող գործերը առաջին ատյանի դատարանում քննվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի նորմերով»:

«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված (ուժի մեջ է մտել 15.04.2020թ.) թիվ ՀՕ-294-Ն օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք)՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 15-ից և տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված սնանկության գործերի վրա: Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հարուցված սնանկության գործերը վարվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի նորմերով»:

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում հարուցված՝ սույն օրենքի 3-րդ հոդվածին համապատասխանող գործերը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, փոխանցվում են դատարան»:

15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի՝ սնանկության գործերի քննության կարգը սահմանող 1-ին հոդվածի համաձայն.

«1. Սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով և սույն օրենքով սահմանված կարգով:

2. Եթե սույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է սույն օրենքով սահմանված կանոններով»:

Համանման կարգավորումն առկա է նաև մինչև 15.04.2020թ. (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 1-ին հոդվածում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ Օրենսգրքի գործողության ոլորտը սահմանող 1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝

«Սույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (այսուհետ՝ սնանկության դատարան) սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի քննության նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Քաղաքացիական դատավարությունն իրականացվում է գործի քննության կամ առանձին դատավարական գործողության կատարման ժամանակ գործող օրենքով»:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ «նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից»:

Օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում»:

Օրենսգրքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին կայացվում է որոշում»:

15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «ընդհանուր իրավասության դատարանից քաղաքացիական գործ ստանալու դեպքում դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի

նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: Վճռաբեկ դատարանի նախագահը հնգօրյա ժամկետում որոշում է գործի ենթակայությունը: Վճռաբեկ դատարանի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան»:

Օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն.

«1. Գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

2. Վճռաբեկ դատարանի նախագահը հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

3. Վճռաբեկ դատարանի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

4. Սույն հոդվածով սահմանված կարգը կիրառվում է նաև վարչական կամ սնանկության դատարանի կողմից համապատասխանաբար վերահասցեագրված հայցադիմումի կամ հանձնված գործի նկատմամբ»:

Սույն գործով առաջին ատյանի դատարանների միջև քաղաքացիական գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու համար գտնում եմ, որ պետք է վերլուծել ստորև ձևակերպված հարցադրումների (այսուհետ՝ Հարցադրումներ) վերաբերյալ իրավակարգավորումները, քաղաքացիական գործում առկա փաստերի շրջանակից դուրս բերել վերաբերելի փաստերը, վերլուծել կիրառման ենթակա իրավունքի նորմերը և կատարել դրանից բխող եզրահանգումներ:

Հարցադրումներ.

1) անհրաժեշտ է վերլուծել Սնանկության դատարանի վարույթում տվյալ դեպքում գտնվող սնանկության գործի վարման կամ առանձին դատավարական գործողությունների կատարման գործընթացում կիրառելի օրենքի վերաբերյալ իրավակարգավորումները, մասնավորապես՝ «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքի (ուժի մեջ է մտել 15.04.2020թ.) գործողության ժամանակի վերաբերյալ իրավակարգավորումները,

2) անհրաժեշտ է վերլուծել և հստակորեն մատնանշել մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքով սահմանված այն պահանջների շրջանակը, որի վերաբերյալ քաղաքացիական գործում փաստերի առկայությունը կարող է միայն թույլ տալ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին՝ վարույթ ընդունած քաղաքացիական գործերն ըստ ենթակայության Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին կատարել իրավաչափ եզրահանգում,

3) անհրաժեշտ է վերլուծել և հստակորեն մատնանշել 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքով սահմանված այն պահանջների շրջանակը, որի վերաբերյալ քաղաքացիական գործում փաստերի առկայությունը կարող է միայն թույլ տալ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին՝ վարույթ ընդունած քաղաքացիական գործերն ըստ ենթակայության Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին կատարել իրավաչափ եզրահանգում:

Դիրքորոշումներ 1-ին հարցադրման վերաբերյալ.

Անհրաժեշտ է վերլուծել Սնանկության դատարանի վարույթում գտնվող սնանկության գործի վարման կամ առանձին դատավարական գործողությունների կատարման գործընթացում կիրառելի օրենքի վերաբերյալ իրավակարգավորումները, մասնավորապես՝ «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքի (ուժի մեջ է մտել 15.04.2020թ.) գործողության ժամանակի վերաբերյալ իրավակարգավորումները:

Այսպես.

«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված (ուժի մեջ է մտել 15.04.2020թ.) թիվ ՀՕ-294-Ն օրենքի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» սահմանող 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 15-ից և տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված սնանկության գործերի վրա: Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հարուցված սնանկության գործերը վարվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի նորմերով»:

«Սնանկության մասին» օրենքի՝ սնանկության գործերի քննության կարգը սահմանող 1-ին հոդվածի համաձայն՝

«1. Սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով և սույն օրենքով սահմանված կարգով:

2. Եթե սույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է սույն օրենքով սահմանված կանոններով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ Օրենսգրքի գործողության ոլորտը սահմանող 1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝

«սույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (այսուհետ՝ սնանկության դատարան) սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի

քննության նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Քաղաքացիական դատավարությունն իրականացվում է գործի քննության կամ առանձին դատավարական գործողության կատարման ժամանակ գործող օրենքով»:

Վերոգրյալ իրավակարգավորումները վերլուծելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի իրավակարգավորման լույսի ներքո՝ կարելի է հստակորեն արձանագրել, որ Ազգային ժողովի կողմից 12.12.2019թ. ընդունված թիվ ՀՕ-294-Ն օրենքով մեծածավալ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Սնանկության մասին» օրենքում, և Օրենքի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» սահմանող հոդվածով տրվել են այն անհրաժեշտ իրավական լուծումները, որոնք հնարավորություն են տալիս տարանջատել մինչև Օրենքի ընդունումը հարուցված և Օրենքի ընդունումից հետո հարուցված սնանկության վարույթների նկատմամբ հետագա կիրառելի իրավակարգավորումների շրջանակը: Այսինքն՝ հստակ ընդգծվել է այն սահմանագիծը, թե սնանկության գործերի որ խմբի նկատմամբ է գործում 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի կարգավորումները (այդ թվում՝ 4-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով), և սնանկության գործերի որ խմբի նկատմամբ է շարունակում գործել մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի կարգավորումները (այդ թվում՝ 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով):

Վերոգրյալ իրավական վերլուծության արդյունքում հստակ է այն, որ մինչև 2020 թվականի ապրիլի 15-ը հարուցված սնանկության գործերի վարման գործընթացում կիրառելի չէ 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի իրավակարգավորումները: Հետևաբար, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները քաղաքացիական գործերը 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով Սնանկության դատարան ըստ ենթակայության ուղարկելիս, ի թիվս այլ հանգամանքների, պետք է պարզեն Սնանկության դատարանում վարվող սնանկության գործը հարուցվել է մինչև 15.04.2020 թվականը (օրենքի ուժի մեջ մտնելը), թե հարուցվել է 15.04.2020 թվականից հետո: Սա է այն սահմանագիծը, որ առաջին ատյանի դատարանները պետք է նկատի ունենան կիրառելի իրավունքի նորմերն ընտրելու գործընթացում:

Միաժամանակ հարկ է նշել, որ ի թիվս 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի մյուս կարգավորումների, Օրենքի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» սահմանող 72-րդ հոդվածի 10-րդ մասը կիրառելիս պետք է այն դիտարկել համակարգային, այն է՝ նույն հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման լույսի ներքո և շրջանակներում:

Մինչև 15.04.2020 թվականը հարուցված սնանկության գործերի վարման գործընթացում 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքով սահմանված իրավակարգավորումները կիրառելը, այդ

թվում՝ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման իմաստով, ուղղակի կիսկասի Օրենքի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» սահմանող 72-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորմանը:

Դիրքորոշումներ 2-րդ հարցադրման վերաբերյալ.

Անհրաժեշտ է վերլուծել և հստակորեն մատնանշել մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքով սահմանված այն պահանջների շրջանակը, որի վերաբերյալ քաղաքացիական գործում փաստերի առկայությունը կարող է միայն թույլ տալ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին՝ վարույթ ընդունած քաղաքացիական գործերն ըստ ենթակայության Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին կատարել իրավաչափ եզրահանգում:

Այսպես.

Մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում»:

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններն իրենց վարույթում գտնվող քաղաքացիական գործերը մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորման հիման վրա կարող են ըստ ենթակայության ուղարկել Սնանկության դատարան հետևյալ հանգամանքների հաշվառմամբ և պարզմամբ.

1) քաղաքացիական գործով վեճը պետք է ծագած լինի սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ,

2) սնանկության գործով պարտապանը պետք է հանդիսանա առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող քաղաքացիաիրավական վեճով պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի իրավակարգավորումների լույսի ներքո մեկնաբանելով մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը՝ կարելի է փաստել, որ համանման փաստական հանգամանքներ ունեցող քաղաքացիական գործերով միայն վերը նշված երկու պայմանների միաժամանակյա առկայությամբ գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնված լինելու դեպքում է հնարավոր արձանագրել, որ գործն ըստ ենթակայության ուղարկած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը չի

հանդիսանում այն պատշաճ դատարանը, որը տվյալ գործով պետք է իրականացնի հետագա քննություն:

Դիրքորոշումներ 3-րդ հարցադրման վերաբերյալ.

Անհրաժեշտ է վերլուծել և հստակորեն մատնանշել 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքով սահմանված այն պահանջների շրջանակը, որի վերաբերյալ քաղաքացիական գործում փաստերի առկայությունը կարող է միայն թույլ տալ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին՝ վարույթ ընդունած քաղաքացիական գործերն ըստ ենթակայության Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին կատարել իրավաչափ եզրահանգում:

Այսպես.

Մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումը սահմանելիս Օրենսդիրը նպատակ է հետապնդել ապահովել սնանկության գործընթացի արդյունավետությունը, այդ թվում՝ ապահովել սնանկության գործի վարման ամբողջականությունը, գործով բացահայտել հնարավոր բոլոր պարտատերերին և նրանց պահանջները, սնանկության վարույթով անցնող ցանկացած գույքի վերաբերյալ հարցի քննարկում կազմակերպել միայն սնանկության վարույթում, ինչը կապահովի սնանկության վարույթի արդյունավետությունը և սնանկության վարույթի մասնակիցների իրավունքների ամբողջական իրացումը, քաղաքացիական և սնանկության գործերի ողջամիտ ժամկետում քննությունը, բացառելով հանդերձ նույն գույքի կամ իրավունքի վերաբերյալ տարբեր դատարաններում քննվող գործերի, ինչպես նաև դատական ակտերի առկայությունը և այլն:

Օրենսդրի այս կամքն իր ցայտուն արտահայտումն է ստացել տեղի ունեցած օրենսդրական փոփոխություններում, որպիսի իրավիճակում ուշադրության է արժանի «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Ազգային ժողովի կողմից ընդունված 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքը (ուժի մեջ է մտել 15.04.2020թ.):

Այսպես. 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի նոր խմբագրությամբ 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն

սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր):

Նշված նոր իրավակարգավորման բովանդակության բացահայտման արդյունքում կարելի է արձանագրել, որ Օրենսդրի սահմանած նոր իրավակարգավորումն ենթադրում է քաղաքացիական գործերի առավել լայն շրջանակի քննություն սնանկության վարույթի շրջանակում, մասնավորապես՝ այն քաղաքացիական գործերը, որոնք կապված են սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերի հետ (բացառությամբ սնանկության գործերով կառավարչների կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի):

Այդուհանդերձ, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Օրենսդիրը սահմանել է նաև 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման շրջանակներում Սնանկության դատարանի կողմից քննության ենթակա (այդ թվում՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններից ըստ ենթակայության ստացված) գործերի շրջանակը որոշելու համար անհրաժեշտ իրավակարգավորումները, որոնց վերաբերյալ իրավական վերլուծությունները մանրամասնորեն շարադրված են «Դիրքորոշումներ 1-ին հարցադրման վերաբերյալ» հատվածում: Այսինքն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում հարուցված քաղաքացիական գործերի փաստական հանգամանքների՝ 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորմանը համապատասխանելն ինքնին բավարար չէ քաղաքացիական գործն ըստ ենթակայության Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին եզրահանգում կատարելու համար:

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններն իրենց վարույթում գտնվող քաղաքացիական գործերը 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավակարգավորման հիման վրա կարող են ըստ ենթակայության ուղարկել Սնանկության դատարան հետևյալ հանգամանքների հաշվառմամբ և պարզմամբ.

1) «Դիրքորոշումներ 1-ին հարցադրման վերաբերյալ» հատվածում վերլուծված հարցերը գործի քննությամբ պարզելով,

2) քաղաքացիական գործով վեճը պետք է ծագած լինի սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման

միջոցների պայմանագրերի առնչությամբ, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի,

3) քաղաքացիական գործով ծագած վեճը պետք է ազդեցություն ունենա Սնանկության դատարանում հարուցված և վարվող սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի իրավակարգավորումների լույսի ներքո մեկնաբանելով 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անհրաժեշտ է փաստել, որ համանման փաստական հանգամանքներ ունեցող քաղաքացիական գործերով միայն վերը նշված երեք պայմանների միաժամանակյա առկայությամբ գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնված լինելու դեպքում է հնարավոր արձանագրել, որ գործն ըստ ենթակայության ուղարկած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը չի հանդիսանում այն պատշաճ դատարանը, որը տվյալ գործով պետք է իրականացնի հետագա քննություն:

Վերոգրյալ իրավական վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին՝ հարկ է նշել հետևյալը.

Դատարանի վարույթում է գտնվում քաղաքացիական գործն ըստ հայցի Սուսաննա Մազմանյանի ընդդեմ Վահան Ութունջյանի, Արամ Ութունջյանի, Ռոման Մուրադյանի, «Դեկադո» ՍՊԸ-ի, «Դի ընդ Էյջ գրուպ» ՍՊԸ-ի, «Յունիբանկ» ԲԲԸ-ի, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ի՝ առոչինչ /շինծու/ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու, պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, և ըստ հայցի Վահան Ութունջյանի սնանկության գործով կառավարիչ Ռուբեն Խալաթյանի ընդդեմ Արամ Ութունջյանի, Ռոման Մուրադյանի, «Դի ընդ Էյջ գրուպ» ՍՊԸ-ի, «Յունիբանկ» ԲԲԸ-ի, «Դեկադո» ՍՊԸ-ի, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ի, երրորդ անձ Սուսաննա Մազմանյանի՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի ճանաչման և որպես հետևանք անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրերի և ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ում կատարված պետական գրանցումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Թիվ ԵԿԴ/0346/04/15 սնանկության գործով 08.12.2015 թվականին կայացված վճռով Վահան Ութունջյանը ճանաչվել է սնանկ *(տես թիվ ԵԿԴ/2653/02/15 քաղաքացիական գործ 7-րդ հատոր, գ.թ 13):*

Հարկ է նկատի ունենալ, որ դատարանների կողմից Օրենքի 72-րդ հոդվածի 10-րդ մասի իրավակարգավորումը կիրառելիս անհրաժեշտ է, ի թիվս այլ հանգամանքների պարտադիր առկայության, պարզել թե Սնանկության դատարանում հարուցված և վարվող սնանկության գործը երբ է հարուցվել:

Սույն գործում առկա նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ թիվ ԵԿԴ/0346/04/15 սնանկության գործով պարտապան Վահան Ութունջյանը սնանկ է ճանաչվել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դեռևս **08.12.2015** թվականի օրինական ուժի մեջ մտած

վճռով, այսինքն մինչև 15.04.2020թ. ուժի մեջ մտած թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի գործողության ժամանակահատվածում:

Հիմք ընդունելով «Դիրքորոշումներ 1-ին հարցադրման վերաբերյալ» հատվածում կատարված իրավական վերլուծությունները՝ գտնում եմ, որ Դատարանի այս հիմնավորմամբ քաղաքացիական գործն ըստ ենթակայության Սնանկության դատարան ուղարկելն իրավաչափ չէ:

Սույն քաղաքացիական գործի փաստական հանգամանքները դիտարկվել են նաև «Դիրքորոշումներ 2-րդ հարցադրման վերաբերյալ» հատվածում կատարված իրավական վերլուծությունների լույսի ներքո, որի արդյունքում արձանագրվել է հետևյալը.

Մինչև 15.04.2020 թվականը (մինչև թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը) գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորման հիման վրա քաղաքացիական գործը Սնանկության դատարանին կարող է ենթակա լինել հետևյալ հանգամանքների հաշվառմամբ և պարզմամբ.

1) քաղաքացիական գործով վեճը պետք է ծագած լինի սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ,

2) սնանկության գործով պարտապանը պետք է հանդիսանա առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող քաղաքացիաիրավական վեճով պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ:

Տվյալ դեպքում, թեպետ սույն քաղաքացիական գործով պատասխանող Վահան Ութունջյանը հանդիսանում է թիվ ԵԿԴ/0346/04/15 սնանկության գործով պարտապան, սակայն հարկ է նկատել, որ և Սուսաննա Մազմանյանի և Վահան Ութունջյանի սնանկության գործով կառավարչի կողմից հարուցված քաղաքացիական գործերով ծագած քաղաքացիաիրավական վեճերը չեն առնչվում թիվ ԵԿԴ/0346/04/15 սնանկության գործի շրջանակներում պարտապանի գույքի կազմում ներառված գույքին և իրավունքներին: Վերոգրյալը հաստատվում է գործի նյութերում առկա հետևյալ նյութերով.

- Կոմիտեի կողմից 01.08.2013 թվականին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01082013-01-0017 վկայականի համաձայն՝ «(…) ք. Երևան, Արամի փողոց, 74 շենք, բնակարան 5 հասցեի անշարժ գույքն առուվաճառքի և հիպոթեքի 29.07.2013թ. թիվ 3807 պայմանագրի հիման վրա 01.08.2013թ.-ին սեփականության իրավունքով գրանցվել է Արամ Վահանի Ութունջյանի անվամբ»:

- Կոմիտեի կողմից 19.05.2014 թվականին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19052014-01-0032 վկայականի համաձայն՝ «(…) ք.Երևան, Արամի փողոց, 74 շենք, բնակարան 5 հասցեի անշարժ գույքը առուվաճառքի 14.05.2014թ. թիվ 2430 պայմանագրի հիման վրա 19.05.2014թ.-ին սեփականության իրավունքով գրանցվել է Ռոման Գագիկի Մուրադյանի անվամբ»:

Հետևաբար, հստակորեն կարելի է արձանագրել, որ վերը նշված հասցեի անշարժ գույքը մինչև Վահան Ութունջյանի սնանկ ճանաչվելը դուրս է եկել նրա գույքի կազմից, ուստի սնանկ ճանաչվելուց հետո այն չէր կարող ներառված լինել նրա գույքի կազմում:

Վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել, որ թիվ ԵԿԴ/2653/02/15 քաղաքացիական գործը Սնանկության դատարանին ըստ ենթակայության հանձնելու համար անհրաժեշտ փաստական և իրավական հիմքերը բացակայում են, ուստի թիվ ԵԿԴ/2653/02/15 քաղաքացիական գործը պետք է հանձնել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները, և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ ԵԿԴ/2653/02/15 քաղաքացիական գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:
2. Սույն որոշումը և թիվ ԵԿԴ/2653/02/15 քաղաքացիական գործի նյութերն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:
3. Որոշման օրինակն ուղարկել Սնանկության դատարան:

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ